

ներէն՝ սանճը կը կրծէ անհամբեր, կ'ուզէ իշխանութեան գլուխ անցնիլ: Բայց Հանրապետութեան նախագահը Պուանքառէն է, որու հետ խզած է տարիներէ ի վեր, որու զէմ ունի ահաւոր քէն ու ատելութիւն: Երկուքը հակոտնեաներ են:

Կլէմանսօ անխնայ կը մտրակէ իրարու յաջորդող զահլիճները — Վիվիանիի, Բրիանի, Միլրանի—որպէս ապիկար եւ անպէտք: «Ֆրանսան չունի՛ր կառավարութիւն» — կը գոռար նա շարունակ իր «Օմմ Լիրը»ի էջերէն: Եւ կ'աւելցնէր .

«Մեզի պէ՛տք է պողպատէ կառավարութիւն մը»...

Եւ իր ամենէն ուժգին հարուածները կը տեղայ Հանրապետութեան նախագահին վերայ: Օր մը կը գրէր. «Պուանքառէն յիմար է, անասնօրէն յիմար»... Չափը կ'անցընէր... Ի վերջոյ, թերթը դադարեցուցին: Գրաքննութիւնն եւս անողոք էր պատերազմի օրերուն: Բայց Կլէմանսօ լոյս ընծայեց իր օրգանը նոր անունով: «Այդատ Մարդ» էր — եղաւ այժմ «Շղթայակալ Մարդ» («Լ'Օմմ Անշէնէ»): Եւ լախտի հարուածները վերսկսուեցան: Հասաւ 1917 թուականը: Ռազմի Մողոքը երես կը դարձնէր Ֆրանսայէն: Բանակը կը կրէր չարաչար պարտութիւններ: Աղէտ՝ աղէտի ետեւէ: Թշնամին կուզար սպառնալին Փարիզի վրայ: Ընդամէնը 70 քիլօմետր տարածութիւն մը կը բաժնէր Ֆրանսական մայրաքաղաքը Հինդէնբուրգի դիւծէն: Անկարգապահութիւնն ու յուսալքումը ծայր կուտար կռուող շարքերու եւ թիկունքի ժողովուրդին մէջ: Էրտեսներու վոհմակ մըն ալ կը մլտար մայրաքաղաքի մէջ եւ Ֆրանսայի այլեւայլ անկիւններում: Կացութիւնը տագնապալի էր:

Ահա այդ ժամանակ էր, որ ձայները՝ նախ տարտամ ու վարանոտ, ապա օր ըստ օրէ սաստկանալով՝ պահանջեցին հրապարակ կոչել «Վազրը»: Հանրապետութեան նախագահը համակերպեց: Կ'ուզէին միայն պատերազմական նախարարութիւնը տալ Կլէմանսօյին, բայց նա ուզեց լրիւ իշխանութիւն, նա պահանջեց վարչապետութիւն եւ առաւ:

Գրեթէ ղեկատար մըն էր... Յաւոտ երեւոյթ մը, բայց պատերազմի ատեն՝ ստէպ ան-

հրածեշտ, անխուսափելի: Եւ 76-ամեայ ծերունին բեմ նետուեցաւ սքանչելի արիութեամբ, երիտասարդական աւելնով: Վերակազմեց թիկունքը, յոյս ու հաւատ ներշնչեց բանակին: Ամէն օր կը նետուէր դէպի ռազմադաշտ եւ կը խօսէր զինուորներուն: Հիպնօզի ոյժ մը ունեցաւ եւ փարատեց սկեպտիկութեան ու լքումի մառախուղը: Գասալիքները հալածեց մահապատիժով, լրտեսները մին միւսի ետեւէ փոռուեցան գիյօտինի տակ: Կլէմանսօյի անուներ միայն կ'ահաբեկէր շատերը՝ նաեւ թշնամու շարքերուն մէջ...

Ծեր առաջնորդը միանգամայն վերակազմեց եւ միջզաշնակցային ոյժերը, ստեղծեց միացեալ ճակատ՝ Ֆօշի հրամանատարութեամբ:

Եւ յաղթանակը չուշացաւ: Կլէմանսօ — փառքի զազաթներուն: Նա կը նախագահէ Խաղաղութեան Վեհաժողովին: Կը թերզարէ Ֆրանսայի եւ Դաշնակիցներու կամքը գերման ոսոխին: Կը դայթակղի, սակայն, դինովյուցիչ յաջողութիւններէն եւ կը սայթաքի... Գերմանիան խորտակելու նպատակով՝ նա ահաւոր բեռ մը դրաւ անոր վրայ, որմէ տուժեց ամենէն առաջ ինքը Ֆրանսան: Տասներկու տարիներ անցեր են եւ դեռ Վերսայի դաշնագրին մղձաւանջը ծանրապած է Եւրոպայի խաղաղութեան վրայ...:

Ֆրանսայի հանրային կարծիքը զգաց դառնօրէն ազգայնամոլ ղեկատարին վրիպումը: Վազրը սքանչելի էր պատերազմի մէջ, բայց ոչ խաղաղութեան բանակցութիւններու հրապարակում... Եւ այդտեղէն սկիզբ առաւ յաղթական Վեթերանին վերջնագոյն ու արտասուելի ողբերգութիւնը: Կլէմանսօն վեր բարձրացնող յորձանքը մէկէն ի մէկ տկսեց իր սրարշաւ տեղատուութիւնը: Հանրապետութեան նախագահի ընտրութիւններն էին: Կը փնտռէին Պուանքառէի յաջորդը եւ շատեր միամտօրէն կը կարծէին, թէ մէկ թեկնածու միայն կայ — Յաղթողը — եւ թէ դուցէ նա պիտի ընտրուէր միաձայն... Այդպէս կը խորհէր թերեւս ինքը Կլէմանսօ եւ նա գերագոյն անզգուշութիւնն ունեցաւ իր թեկնածութիւնն առաջադրելու... Ու չարաչար նուաստացաւ: Երեսփոխաններու ահազին մեծամասնութիւնը մերժեց իր ձայները